ՊԱՐԳԵՎԱՏՐՎԵԼ ԵՆ «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»-Ի ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐՆԵՐԸ

Ամփոփվեցին ԱրՊՀ պատմության և իրավագիտության ֆակուլտետի պատմության և քաղաքագիտության ամբիոնի նախաձեռնությամբ «Հայոց պատմություն» առարկայից տեղի ունեցած օլիմպիադայի արդյունքները: Փետրվարի 23-ին տեղի ունեցավ օլիմպիադայի մրցանակակիրների պարգևատրման արարողությունը: Օլիմպիադան կազմակերպվել էր հանրապետության 10-12-րդ դասարանների աշակերտների շրջանում, որին աշակերտները ցուցաբերել են բարձր ակտիվություն:

Արցախի Հանրապետության տարբեր համայնքներից ներկայացած աշակերտներին և նրանց ուսուցիչներին ողջունել և շնորհակալություն է հայտնել պատմության և քաղաքագիտության ամբիոնի վարիչ, պ.գ.թ., դոցենտ Նունե Սարումյանը՝ շնորհավորելով նրանց՝ հաջողություն գրանցելու համար. «Շնորհակալություն ձեզ և ձեր ուսուցիչներին, որ կարողացաք այս դժվար պայմաններում մասնակցություն ցուցաբերել և գոհացուցիչ արդյունքներ գրանցել: Սիրե՛ք «Պատմություն» առարկան և շարունակեք այն լավ սովորել, համոզված եմ՝ վաղը դուք եք լինելու մեր պատմությունը կերտողները»:

Օլիմպիադայում 12-րդ դասարանցիների շրջանում առաջին տեղ զբաղեցրած Մալենա Եսայանը սովորում է Մարտունու համար 1 դպրոցում և պատրաստվում է ընդունվել ԱրՊՀ՝ «Պատմություն» մասնագիտությամբ:

ԸՆԹԱՆՈՒՄ Է ԱրՊՀ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ ՓՈՐՁՈՒՍՈՒՑՈՒՄԸ

Արցախի պետական համալսարանում փետրվարի 6-ից մեկնարկած 2-րդ կիսամյակի ուսումնական պարապմունքներին զուգընթաց մեկնարկել է նաև 4-րդ կուրսերի փորձուսուցումը: Յուրաքանչյուր ֆակուլտետում փորձուսուցում անցնող ուսանողների հետ կազմակերպվել են հանդիպումներ ֆակուլտետի դեկանի, փորձուսուցման բաժնի, փորձուսուցման ղեկավարների մասնակցությամբ: Հանդիպումների ընթացքում ուսանողներին տրվել են փորձուսուցման հետ կապված անհրաժեշտ տեղեկատվություն:

ԱրՊՀ փորձուսուցման բաժնի պետ Անուշ Հայրապետյանի խոսքով՝ մանկավարժական ուղղվածությամբ սովորող ուսանողների փորձուսուցումը, ըստ պլանի, նախատեսված է անցկացնել հանրակրթական դպրոցներում, «Իրավագիտություն» կրթական ծրագրի ուսանողները՝ նոտարական գրասենյակ համար 1-ում, «Թարգմանչական գործ»-ը՝ ԱՀ ԱԺ-ում և արտաքին գործերի նախարարությունում, «Լրագրություն»-ը՝ «Ազատ Արցախ» հանրապետական թերթում, Արցախի հանրային հեռուստառադիոյում և Արցախի այլ ՁԼՄ-ներում, «Տնտեսագիտություն»-ը՝ ԱՀ Ազգային վիճակագրական ծառայությունում, Արցախի ներդրումային հիմնադրամում, «Արցախբանկ» ՓԲԸ-ում և այլ կազմակերպություններում, «Տեղեկատվական տեխնոլոգիաներ»-ը՝ «Այ Թի» ոլորտում գործող «Կապիտալ Սոֆթ», «Սիներջի սիստեմս» ընկերություններում, «Հոգեբանություն»-ը՝ Ք.Քոքսի անվան վերականգնողական կենտրոնում և հոգեբանական ծառայություն մատուցող այլ հաստատություններում:

ԱրՊՀ փորձուսուցման բաժնի պետի հավաստմամբ՝ տարեցտարի աշխատանքներ են իրականացվում ուսանողների փորձուսուցումն արդյունավետ դարձնելու ուղղությամբ:

«ԱՐՑԱԽԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ամսաթերթ
Հիմնադիր՝ «ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊՈԱԿ
Հրատարակվում է 1994 թվականից
Խմբագիր՝ Զ. Սառաջյան
Մեր հասցեն՝ Մ.Գոշի 5:
Հեռ. (047) 94 04 91
Տպաքանակ՝ 400
Տպագրվում է Արցախի պետական համալսարանի հրատարակչության տպարանում
Իմացի՛ր քո համալսարանի մասին:
Այցելի՛ր asu.am կայք:
www.asu.am

ԱՐՑԱԽԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՄՍԱԹԵՐԹ - ЕЖЕМЕСЯЧНАЯ ГАЗЕТА «АРЦАХИ АМАЛСАРАН»
№ 01(247)
հունվար-փետրվար-2023

ԱրՊՀ ՌԵԿՏՈՐ ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴԻ ԱՌԹԻՎ

Սիրելի՛ ուսանողներ,

Հարգելի՛ գործընկերներ,

Անցնող տարին լի էր դժվարություններով ու մարտահրավերներով, որոնք ձեզ հետ միասին կարողացանք համատեղ ջանքերով հաղթահարել՝ արդյունավետ իրականացնելով նախանշած ծրագրերը ուսումնական, գիտակրթական, մարզամշակութային և մի շարք այլ ուղղություններով՝ արձանագրելով հաջողություններ բարդ ու դժվարին պայմաններում:

Արցախի պետական համալսարանը արել և կշարունակի անել հնարավորը կրթության որակի շարունակական բարելավման և աշխատաշուկայի պահանջները բավարարող, մրցունակ մասնագետներ պատրաստելու ուղղությամբ:

Մեր բոլոր ձեռնարկումներում մենք որպես սխրանքի ուղենիշ ունեցել և պիտի շարունակենք ունենալ հանուն հայրենիքի իրենց կյանքը զոհաբերած մեր քաջ տղաների հիշատակը, ովքեր ընկան հանուն կյանքի, հանուն մեր ու ձեր ապրելու, ազնիվ ու շիտակ ապրելու, ճշմարիտ արժեքներով ապրելու: Հավերժ փառք ու խոնարհում նրանց:

Եկեք մեզ պատուհասած այս դժվար իրավիճակում չվհատվենք ու չընկճվենք և շարունակենք անկոտրում կամքով խիզախել ամեն մեկս մեր ոլորտում, իրար սատարելով, ապրումակցելով, իրար ձեռք հասցնելով՝ թե՛ դասախոս և թե՛ ուսանող: Միասնականությունն ու միաբանությունը, անկոտրում կամքն ու լավատեսությունը և նպատակային աշխատանքը կհասցնեն մեզ մեր ազգային նպատակին:

Ամանորն ու Սուրբ Ծնունդը խորհրդանշում են ընտանիք: Բոլորիդ ընտանիքներին մաղթում եմ հաջողություններ, բարեկեցություն և խաղաղ ու արժանապատիվ կյանք մեր հայրենիքում:

Արցախը ապրում է Ձեզնով, Արցախը ապրեցնում է Ձեզնից յուրաքանչյուրը:

Մաղթում եմ բոլորիդ անձնական և համազգային իղձերի իրականացում:

Շնորհավոր Ամանոր և Սուրբ Ծնունդ:

ԱՐՊՀ ԵՎ ԱՅՈՎԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԻՋԵՎ ԿՆՔՎԵԼ Է ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

Այս օրերին շրջափակման պայմաններում ճշմարտության և արդարության կենտրոնը (CFTJ) կրթական համագործակցություն է հաստատել Այովայի համալսարանի և Արցախի պետական համալսարանի միջև:

Երկու համալսարանների միջև փետրվարի 22-ին ստորագրվել է փոխըմբռնման հուշագիր՝ կրթական, վերապատրաստման և հետազոտական հետագա համագործակցությունը խթանելու նպատակով:

Համաձայն հուշագրի՝ երկու համալսարանները կգործակցեն կրթական, վերապատրաստման, հետազոտական ուղղություններով՝ երկուստեք ապահովելով վիրտուալ մասնակցություն դասախոսությունների, փորձի փոխանակում, գիտաժողովներին հրավերներ գիտնականներին՝ վիրտուալ մասնակցությամբ, տեղեկատվության փոխանակում նրանց հետաքրքրող ոլորտների վերաբերյալ:

Ճշմարտության և արդարության կենտրոնի հավաստմամբ՝ համագործակցությունը հանդիսանում է 2022թ. հունիսին Երևանում կենտրոնի կողմից կազմակերպված մարդու իրավունքների միջազգային համաժողովի անմիջական արդյունք:

«Մեր նպատակն է միավորել ողջ աշխարհի հակամարտության գոտիներում մարդու իրավունքներով և սոցիալական արդարության հարցերով զբաղվող պրոֆեսորադասախոսական կազմին և ուսանողներին: Մենք անհամբերությամբ սպասում ենք հնարավորության Արցախի մասին տեղեկանալու և համագործակցության զարգացման հնարավորության սահմանում տեղեկատվություն ստանալու», - նշել է Այովայի համալսարանի դեկան Գանիմը:

«Մայր բուհի համար անչափ կարևոր է այսպիսի յուրահատուկ համագործակցությունը այնպիսի հեղինակավոր համալսարանների հետ, ինչպիսին Այովայի համալսարանն է, հատկապես այս դժվար ժամանակներում և նման համագործակցությունները հնարավորությունների պատուհան են բացում քաղաքացիական աշխարհի համար»,- նշել է ԱրՊՀ պրոռեկտոր Վիտյա Յարամիշյանը:

«ՇՈՒՇԻԻ ԿՈՐՈՒՍՅԱԼ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ» ԹԵՄԱՅՈՎ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ԱրՊՀ պրոֆեսոր Գրիգորի Գաբրիելյանցի անվան քննարկումների կաբինետում հունվարի 27-ին Գ. Գաբրիելյանցի հիմնադրամի նախաձեռնությամբ հիմնադրամի հանրության հետ կապերի պատասխանատու, «Շուշի քաղաքի թանգարաններ» ՊՈԱԿ տնօրեն Լուսինե Գասպարյանը հանդես է եկել դասախոսությամբ:

Դասախոսության ընթացքում նա ներկայացրել է պատերազմի հետևանքով Շուշիի կորուսյալ մշակութային ժառանգությունը, խոսել Շուշիի թանգարանների մասին՝ ցավով նշելով, որ կերպարվեստի, երկրաբանության և պատմության թանգարաններում գտնվող մշակութային արժեքները 44-օրյա պատերազմի ընթացքում մնացել են քաղաքում և գտնվում են ադրբեջանցիների ձեռքում:

Կարևորելով նմանատիպ միջոցառումները՝ Լուսինե Գասպարյանը շեշտել է, որ անընդհատ պետք է խոսել մշակութային արժեքներից՝ դրանով արտահայտելով մեր պահանջատիրությունը:

«Մենք երբեք աչք չենք ունեցել ուրիշի ինչքի վրա, բայց մենք տեր ենք մեր արժեքներին»,- ասել է նա՝ հավելելով, որ նմանատիպ միջոցառումները շարունակական կլինեն:

ԽՐԱԽՈՒՍՎԵԼ ԵՆ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ԻՐԱԿԱՆԱՑՐԱԾ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

Արցախի Հանրապետության շրջափակման հետևանքով երկրում ստեղծված իրավիճակում կազմակերպված մարդասիրական մի շարք միջոցառումներում ԱրՊՀ ուսանողները իրականացրել են կամավորական աշխատանքներ: Կամավորական աշխատանքներ իրականացրած ԱրՊՀ ուսանողներին փետրվարի 22-ին ռեկտոր Արմեն Սարգսյանը խրախուսել է գրքերով և շնորհակալագրերով:

Կարևորելով կամավորական աշխատանքների անհրաժեշտությունը՝ ռեկտորը շնորհակալություն է հայտնել ուսանողներին, ուսանողների հետ տարվող աշխատանքների պատասխանատուներին՝ ընդգծելով, որ մայր բուհի ուսանողները մեր երկրում տեղի ունեցած բոլոր իրադարձությունների ժամանակ միշտ էլ եղել են կամավորական աշխատանքների կիզակետում՝ թե՛ պատերազմների և թե՛ իրավիճակի տարաբնույթ սրացումների ընթացքում:

«Այսօրվա ուսանողությունն իր հայրենասիրությամբ, մտածողությամբ չի զիջում նախորդ սերունդներին: Շնորհակալություն մեր ուսանողներին, ովքեր երկրում ստեղծված դժվար իրավիճակը մեղմելուն ուղղված աշխատանքներում իրենց նպաստն են ունեցել»,-նշել է ռեկտորը:

Կամավորականների աշխատանքը կարևորել և նրանց շնորհակալություն է հայտնել նաև ԱրՊՀ ՈՒՇՀՀՏԱԳ պրոռեկտոր Վիտյա Յարամիշյանը՝ ընդգծելով, որ ԱրՊՀ ուսանողների կատարած կամավորական աշխատանքների մասին դրական արձագանքներ են հնչել հանրության տարբեր շրջանակների կողմից, ինչը գոհացուցիչ է:

ԱրՊՀ բանասիրական ֆակուլտետի ուսանողական խորհրդի նախագահ Լաուրա Գրիգորյանի խոսքով՝ վերջին ամիսներին կատարված կամավորական աշխատանքները երկու ուղղությամբ են իրականացրել՝ կտրոնների տրամադրման և բարեգործական հիմունքներով Արցախ բերված մրգերի ու բանջարեղենի փաթեթավորման ու սոցիալական որոշակի խմբերի տրամադրման աշխատանքներ, որոնց մեծ պատրաստակամությամբ են ընդգրկվել ուսանողները:

Ուսանողներին գրքերը և շնորհակալագրերը հանձնել են ԱրՊՀ ռեկտորը և ՈՒՇՀՀՏԱԳ պրոռեկտորը:

ԳԻՐՔ ՆՎԻՐԵԼՈՒ ՕՐԸ ԱրՊՀ-ՈՒՄ

Ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանի ծննդյան օրը՝ փետրվարի 19-ը, 2008թ.-ից ի վեր ՀՀ գրողների միության նախկին նախագահ, երջանկահիշատակ Լևոն Անանյանի նախաձեռնությամբ նշվում է որպես գիրք նվիրելու օր:

Այսօր օրը նշվեց նաև Արցախի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետում: Ֆակուլտետի ուսանողական գիտական ընկերության նախաձեռնությամբ կազմակերպվել է «Գաղտնի ընթերցող» գրքախաղը, որին մասնակից դասախոսներն ու ուսանողները միմյանց նվիրել են գրքեր՝ համառոտ ներկայացնելով նաև նվիրելու համար ընտրված գրքի խորհուրդն ու նշանակությունը:

ՈւԳԸ նախագահ Տաթևիկ Ղահրամանյանի խոսքով՝ միջոցառման նպատակը ուսանողների շրջանում ընթերցանությունը խթանելն է: Ճիշտ գրքեր կարդալը կյանքի փորձառություն է ձևավորում ուսանողների մոտ, առողջ հայացք՝ աշխարհի, մարդկանց հանդեպ:

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՎԻ ՕՐԸ՝ ԱՐՊՀ-ՈՒՄ

Փետրվարի 21-ը նշվում է որպես մայրենի լեզվի միջազգային օր: Օրը նշվեց նաև Արցախի պետական համալսարանում: Բանասիրական ֆակուլտետի ուսանողական խորհրդի նախաձեռնությամբ կազմակերպվել է գրական-գեղարվեստական ցերեկույթ, որի ընթացքում ուսանողները հանդես են եկել աստմունքով, երաժշտական կատարումներով:

Ուխ նախագահ Լաուրա Գրիգորյանի խոսքով՝ միջոցառման նպատակը ուսանողների շրջանում ազգային արժեհամակարգի ամրապնդումն է, ինքնության պահպանումը, հայրենասիրության, ազգային մշակույթի կարևորումը:

«Մեր լեզուն ազգային բացարձակ արժեք է՝ ազգային մշակույթի ձևավորման միջոց: Մաշտոցից մինչև մեր օրերը հայերենը մեզանից անբաժան է: Հայերենն է մեր մտածողության և հոգեկերտվածքի կարևոր հիմքը»,- նշել է Լաուրա Գրիգորյանը:

ԱրՊՀ ՈՒՇՀՀՏԱԳ պրոռեկտոր Վիտյա Յարամիշյանը, կարևորելով միջոցառումը, ընդգծել է մայրենի լեզվի դերը ազգային ինքնության պահպանման գործում. «Մենք պետք է անաղարտ պահենք մեր լեզուն, որովհետև այն ամենաթանկ հարստությունն է, որը պետք է ընդունենք որպես ժառանգություն և փոխանցենք մեր սերունդներին»:

«ԱՆԱՂԱՐՏ ՊԱՀԵՆՔ ՄԵՐ ՄԱՅՐԵՆԻՆ» ԽՈՐԱԳՐՈՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

Շարունակվում են մայրենի լեզվի միջազգային օրվան նվիրված միջոցառումները: Փետրվարի 22-ին ԱրՊՀ Ակ. Սերգեյ Աբրահամյանի անվան հայոց լեզվի ամբիոնի դոցենտ, բ.գ.թ. Նունե Խաչատրյանի նախաձեռնությամբ «Լրագրություն» 3-րդ կուրսի ուսանողները կազմակերպել են «Անաղարտ պահենք մեր մայրենին» խորագրով միջոցառում:

Միջոցառման մասնակից ուսանողուհի Աննա Հայրապետյանի համոզմամբ՝ մամուլը բոլոր ժամանակներում իր կարևոր դերն է ունեցել լեզվի պահպանման գործում: Այդ գիտակցումով ուսանողներն ուսումնասիրել են ՀՀ և ԱՀ հեռուստատեսության, ռադիոյի և թերթերի լեզուն, ելույթներում անդրադարձել հաճախակի գործածվող լեզվական սխալներին, ընդգծել, որ լեզվական շատ սխալներ գնալով արմատավորվում են, և պայքարը սխալների դեմ պետք է ավելի պարտավորեցնող լինի յուրաքանչյուրի համար:

Միջոցառման ընթացքում լսարանի հետ կապն ապահովվել է հարց-պատասխանի միջոցով:«Հայոց լեզվի անաղարտության պահպանումը այսօր էլ շարունակում է մնալ բոլորիս հիմնական խնդիրը: Հնչեցված ելույթները նպատակ ունեն ոչ միայն սխալը ճանաչելու, այլև ճիշտ տարբերակը ընտրելու: Պետք է կարողանանք խոսք կառուցելու դժվարությունները հաղթահարել, լեզվական սխալները իմանալ և դրանց ուղղումները յուրացնել»-ամփոփելով միջոցառումը՝ նշել է Նունե Խաչատրյանը:

«13 ՓԵՏՐՎԱՐ 1988Թ.-13 ՓԵՏՐՎԱՐ 2023Թ.» ԽՈՐԱԳՐՈՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

Արցախի պետական համալսարանի պատմության և իրավագիտության ֆակուլտետի պատմության և քաղաքագիտության ամբիոնի նախաձեռնությամբ և բուհում գործող պատմաբանների ակումբի աջակցությամբ բուհում կազմակերպվել է «13 փետրվար 1988թ.-13 փետրվար 2023թ.» խորագրով միջոցառում՝ նվիրված 1988թ. փետրվարի 13-ից սկիզբ առած տասնյակ հազարավոր մարդկանց մասնակցությամբ Ստեփանակերտում մեկնարկած զանգվածային ցույցերին:

Միջոցառմանը հրավիրված էին Արցախյան շարժման ակտիվիստներ, ԱրՊՀ դասախոսներ և ուսանողներ: ԱրՊՀ պատմության և քաղաքագիտության ամբիոնի վարիչ, պատմական գիտությունների թեկնածու Նունե Սարումյանը ներկայացրեց փաստական տեղեկություններ Արցախյան շարժմանն ու պատերազմին մասնակցած ԱրՊՀ ուսանողների մասին: Նրա խոսքով՝ պատմական այս օրը մեծ խորհուրդ ունի:

«35 տարի առաջ այս օրը ժամանակի իշխանությունների և պատկան մարմինների վերահսկողության պայմաններում մեր ուսանողներն ու դասախոսները համարձակորեն միահամուռ ձևով իրենց ձայնը բարձրացրին ադրբեջանյան իշխանությունների հակահայկական քաղաքականության դեմ և մայր Հայաստանին միանալու իրենց կամքը արտահայտեցին: Այդ այն դեպքում, երբ Ադրբեջանի իշխանությունները Կոմկուսի ԿԿ բաժնի վարիչ Ա. Ասադովի, ԿԿ քարտուղարներ Կոնովալովի և Օրուջևի կողմից սպառնալիք հնչեցվեց՝ հարյուր հազարավոր ադրբեջանցիներ մտցնել Ղարաբաղ, պատժելու համար արցախահայերին: Այն ժամանակվա ուսանողներն ու ներկա ժամանակվա ուսանողները նույն մտահոգությամբ են ապրում, այն է՝ հայրենիքի ազատագրման ու անվտանգության ապահովումը: Ցավալին ուղղակի հիմա այն է, որ նույն համարձակությամբ ու հերոսությամբ առաջնորդվելով՝ նրանք կանգնած են մի սարսափելի խնդրի առջև՝ գաղափարական անվստահելիության և պարտվողի հոգեբանական բարդույթի»,-ընդգծել է Ն. Սարումյանը:

Միջոցառմանը ներկա էր նաև ԱրՊՀ Արցախի գիտական կենտրոնի տնօրեն, պատմաբան, ԱրՊՀ դասախոս, պրոֆեսոր Ստեփան Դադայանը, ով շարժման տարիներին բուհի պատմության ֆակուլտետի դեկանն էր: Նա, այդ օրերի հուշերից ներկայացնելով ուսանողներին, պատմեց, թե ինչպիսի զրկանքների միջով են անցել՝ ընդգծելով համալսարանի մեծ դերը Արցախյան շարժման ընթացքում՝ զանգվածային ցույցերից մինչև գոյապայքար:

«35 տարի անց պետք է վերադառնանք մեր ազգային ազատագրական պայքարին: Ամեն ինչի հիմքը գաղափարախոսությունն է, պայքարը պետք է դառնա վերջնական հաղթանակ: Մենք պարտվել ենք ճակատամարտը, բայց ոչ պատերազմը, իսկ հաղթել կարող ենք միայն միասնականությամբ՝ հիմքում դնելով ազգային ազատագրական գաղափարախոսությունը: Հաղթելու բանալին դա է»,-նշել է Արցախի խորհրդարանի «Հայ հեղափոխական դաշնակցություն» խմբակցության ղեկավար Արթուր Մոսիյանը, ով 1988-ի սերնդի այն ակտիվ ուսանողներից էր, ովքեր կանգնած էին շարժման ակունքներում:

ԱրՊՀ հրատարակչության բաժնի պետ Եղիշե Առուշանյանը 1988-ի այն ուսանողներից էր, ովքեր իրենց ներդրումն ունեցան Արցախյան շարժմանը և անկախության գոյապայքարում:

Միջոցառմանը նա պատմեց իր հուշերից. «1988թ. հնչած «Միացում» կոչը պետք է ուղենիշ լինի ներկա սերնդի համար, ինչպես 88-ի սերնդի համար էր, որի խորհուրդն է՝ Արցախ-Հայաստան-Սփյուռք մեկ գաղափարի շուրջ միավորվելը հանուն միասնական հայրենիքի»:

ԿԱԶՄԱԿԵՐՊՎԵԼ Է ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ՝ ԱՐՑԱԽԻ ՎԵՐԱԾՆՆԴԻ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Փետրվարի 20-ին Ստեփանակերտի մշակույթի և երիտասարդության պալատում Արցախի Վերածննդի օրվա կապակցությամբ կազմակերպվել է հանդիսավոր միջոցառում:

Միջոցառմանը ներկա էին Արցախի Հանրապետության նախագահ Արայիկ Հարությունյանը, Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմի առաջնորդ Վրթանես եպիսկոպոս Աբրահամյանը, Աժ նախագահ Արթուր Թովմասյանը, Արցախի Հանրապետության երկրորդ և երրորդ նախագահներ Արկադի Ղուկասյանն ու Բակո Սահակյանը, պետնախարար Ռուբեն Վարդանյանը, պետական բարձրաստիճան պաշտոնյաներ, Արցախյան ազգային-ազատագրական շարժման ակտիվիստներ:

Միջոցառմանը ներկա էին նաև Արցախի պետական համալսարանի ռեկտոր Արմեն Սարգսյանը, ռեկտորատի կազմը և ուսանողներ:

ԲԱՑ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ՝ ՆՎԻՐՎԱԾ ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ 35-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ

Փետրվարի 20-ին Արցախի պետական համալսարանում տեղի ունեցավ բաց դասախոսություն՝ նվիրված ազգային- ազատագրական պայքարի՝ ղարաբաղյան շարժման 35-րդ տարեդարձին: Տարբեր ֆակուլտետներից ուսանողների մասնակցությամբ բաց դասախոսությունը վարել է ԱրՊՀ ՈՒՇՀՀՏԱԳ պրոռեկտոր Վիտյա Յարամիշյանը:

Պրոռեկտորը, շնորհավորելով ներկաներին շարժման 35-ամյակի առթիվ, խոսել է փետրվարի 20-ի օրվա խորհրդի, շարժման պատմական նախադրյալների, 1988-ի զարթոնքի և հետագա իրադարձությունների մասին:

1988թ.-ին Արցախի մայր բուհի ուսանողությունը և դասախոսներ եղել են Արցախյան շարժման առաջամարտիկներից:

Պրոռեկտորի խոսքով՝ Ղարաբաղյան շարժման նշանակությունը մեր ժողովրդի համար անհնար է գերագնահատել:

«Այդ դժվարին, բայց երանելի օրերին մեր ժողովուրդը փաստացի վերածնվեց, վերականգնվեց նրա հավատը սեփական ուժերի նկատմամբ, հաղթահարվեց նրան ուրվականի նման հետապնդող զոհի, պարտվողի հոգեբանությունը, քանի որ հասկացավ միասնության վճռական դերակատարությունը՝ հաջողության ճանապարհին: Ասպիսի մտածելակերպը հնարավորություն է տալիս վերջին տարիների անհաջողությունները գնահատել որպես ժամանակավոր, որովհետև սեփական փորձառությամբ մեր ժողովուրդն ապացուցեց, որ անելանելի իրավիճակներ չեն լինում, հատկապես այն ժամանակ, երբ ազգն է ոտքի ելել՝ իր իրավունքների համար մղվող պայքարում», -ընդգծել է Վ. Յարամիշյանը՝ հավելելով, որ միասնականությամբ և համատեղ ջանքերով հնարավոր կլինի հաղթահարել դժվարությունները:

ԱՌՑԱՆՑ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ՀՀ ԳԱԱ ՀՐ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՀԵՏ ՀԱՄԱՏԵՂ

Արցախի պետական համալսարանը փետրվարի 21-ին մասնակցել է ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի նախաձեռնած առցանց միջոցառմանը՝ նվիրված Մայրենիի օրվան:

Միջոցառումը կայացել է ՀՀ լեզվի կոմիտեի, Երևանի պետական համալսարանի, էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանի, Արցախի պետական համալսարանի, Հայկական պետական մանկավարժական համալսարանի, Բրյուսովի անվան պետական համալսարանի, Երևանի պետական բժշկական համալսարանի, Գավառի պետական համալսարանի, Գորիսի պետական համալսարանի, Վանաձորի պետական համալսարանի, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի, Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի, Շիրակի պետական համալսարանի, ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի գործընկերությամբ:

Միջոցառման ընթացքում հայերենը ներկայացվել է իր տարածաժամանակային բազմազանությամբ (գրաբար, միջին հայերեն, գրական արևելահայերեն, գրական արևմտահայերեն, բարբառներ): Հնչել են խոսքի նմուշներ նաև այլ լեզուներով՝ ռուսերեն, ասորերեն, քրդերեն, արաբերեն, պարսկերեն, հինդի և այլն:

ԳԱԱ լեզվի ինստիտուտի տնօրեն Վիկտոր Կատվալյանը, ողջունելով միջոցառման մասնակիցներին, շնորհավորել է Մայրենի լեզվի միջազգային օրվա առթիվ, նշելով, որ այն պետք է յուրաքանչյուր մարդու համար լինի ամենակարևոր տոներից մեկը, որովհետև այն ինքնության տոն է:

Արցախի պետական համալսարանի ռեկտորը, շնորհակալություն հայտնելով ԳԱԱ լեզվի ինստիտուտին համագործակցության համար, շնորհավորել է ներկաներին օրվա առթիվ՝ ընդգծելով վերջին տարիներին տոնի՝ ավանդույթի ուժ ստանալու գործում լեզվի ինստիտուտի ունեցած դերը:

«Պատմությունը ցույց է տվել, որ լեզուն ինքնության պահպանման գործում մեծ դեր ու նշանակություն է ունեցել: Այսօր ևս դժվար ժամանակներ են ապրում Հայաստանը, Արցախը, Սփյուռքը: Համոզված եմ, որ մեր մայրենի լեզվի շնորհիվ ևս կկարողանանք հաղթահարել դժվարությունները և պահպանել մեր ազգային ինքնությունը»,-նշել է ռեկտորը:

ԱրՊՀ-ից միջոցառմանը հանդես են եկել Ակադեմիկոս Ս.Աբրահամյանի անվան հայոց լեզվի ամբիոնի դասախոս, բ.գ.թ., դոցենտ Ռենա Մովսիսյանը (Բերդաշեն. բուն Ղարաբաղի բարբառ, Բերդաշենի խոսվածք), նույն ամբիոնի դասախոս Արմինե Արզումանյանը (Ամենից լավ տունը. Մարտակերտի խոսվածք, Հոռաթաղի ենթախոսվածք), ԱրՊՀ ասպիրանտներ Մանուշակ Ավետիսյանը (Մանրապատում. Մեհտիշենի բարբառ), Հերմինե Արզումանյանը (Զրույց հադրութեցու հետ. Հադրութի ենթաբարբառ, Մարիամաձորի խոսվածք), ուսանողուհի Անի Աբաղյանը (Մունք. Հադրութի բարբառ, Մեծ Թաղերի խոսվածք):

Արցախյան խմբի աշխատանքները համակարգող, ԱրՊՀ բանասիրական ֆակուլտետի դեկան, բ.գ.թ., դոցենտ Լուսինե Մարգարյանը շնորհակալություն է հայտնել Հր.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտին՝ նշելով. «Մայրենին այսօր աշխարհասփյուռ հայերի սիրտ ու մտքի կամուրջը եղավ. Մայր Հայրենիքը՝ կենտրոնաձիգ առանցքը՝ ի դեմս հայերենապահպան առաքելություն իրականացնող Հր.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի: Մայրենին ուժ է ու միասնություն. սա խորհուրդ չէ, ճանապարհ է՝ միշտ տունդարձով»: